

Բ. Բաբայան

B. Babayan

Б. Бабаян

ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ

The President of National Statistical Service of the NKR

Президент Национальной статистической службы НКР

Ուղերձ

Message

Послание

Յանկացած երկրում ժողովրդագրական իրավիճակը հստակ պատկերացնելու, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները որոշելու նպատակով խիստ անհրաժեշտ է բնակչության մասին մանրամասն վիճակագրական տվյալների առկայությունը:

Ղարաբաղյան շարժման, Խորհրդային Միության փլուզման, Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից հրահրած պատերազմի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հետևանքով երկրում ստեղծված միգրացիոն անվերահսկելի տեղաշարժերի, քաղաքական, սոցիալ-տնտեսական անկայունության պայմաններում 1989 թվականին Լեռնային Ղարաբաղում անցկացված վերջին մարդահամարի արդյունքները օբյեկտիվ պատճառներով շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը և, բնականաբար, չէին կարող հիմք հանդիսանալ բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառման, ինչպես նաև հետագա առաջընթացի ուղղությունների ու սկզբունքների կանխորոշման համար:

Երկրի սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական կառուցվածքի լուրջ փոփոխությունները հրամայական դարձրեցին հերթական՝ արդի պահանջներով մշակված մեթոդաբանությամբ մարդահամարի անցկացումը: Միաժամանակ, միջազգային չափանիշներին համապատասխան առաջին մարդահամարի անցկացումը ևս մեկ քայլ է ողջ աշխարհի հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչման համար:

Մարդահամարի նպատակն էր տեղեկություններ ստանալ բնակչության բնակի

In any country for specification of a demographic situation and definition of prospects of social and economic development presence of detailed statistical data about the population is extremely important.

In our case, the massive and unregulated migration resulting from the Karabakh conflict, the Soviet collapse, the war unleashed by Azerbaijan following the establishment of the Nagorno-Karabakh Republic, and the subsequent political, social and economic instability, made the data from the 1989 population census in Nagorno-Karabakh largely obsolete when it came to measuring the present population and forecasting directions and principles of development.

Significant changes in our country's social-demographic and economic structure actualized the need for a new population census to be based on methodology developed in line with modern requirements. At the same time, conduct of the first-ever census based on international standards is yet another step contributing to recognition of the Nagorno-Karabakh Republic's independence by the international community.

The primary goal of the census was to acquire information on the population's size and its distribution throughout the republic, as well as the data needed to plan for social and economic development of the country.

The census data will

В любой стране для уточнения демографической ситуации и определения перспектив социально-экономического развития чрезвычайно важно наличие подробных статистических данных о населении.

Результаты последней переписи населения, проведенной в Нагорном Карабахе в 1989г. в условиях неконтролируемых миграционных передвижений, возникших в стране вследствие карабахского движения, распада Советского Союза, навязанной со стороны Азербайджана войны против Нагорного Карабаха, провозглашения Нагорно-Карабахской Республики, а также политической, социально-экономической нестабильности, по объективным причинам не отражали действительную картину и, естественно, не могли служить основой для текущего учета численности населения, а также прогнозирования направлений и принципов дальнейшего развития.

Серьезные изменения социально-демографической и экономической структуры страны сделали актуальным проведение очередной переписи населения по разработанной в соответствии с современными требованиями методологии. В то же время, проведение первой в соответствии с международными стандартами переписи является еще одним шагом на пути к признанию мировым сообществом независимости Нагорно-Карабахской Республики.

Целью переписи было получить сведения о численном составе населения и его размещения по территории республики, а также другие данные, необходимые для

ստանալ բնակչության թվային կազմի և հանրապետության տարածքում նրա տեղաբաշխվածության, ինչպես նաև այլ տվյալներ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները որոշելու համար:

Մարդահամարի տվյալները հնարավորություն կտան հետագայում սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների մշակման հիմքում դնել ոչ թե փորձագիտական գնահատականներ, այլ իրական ցուցանիշներ, և կնպաստեն տարբեր բնագավառների քաղաքականության մշակման ու իրականացման վերաբերյալ արդյունավետ որոշումներ կայացնելուն:

Մարդահամարը բարձր մակարդակով և կազմակերպված անցկացնելու համար պահանջվեց հսկայածավալ աշխատանք, որն անմիջականորեն իրականացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների աջակցությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարն իրականացվեց պատշաճ մակարդակով, որն իրագործեց իր առջև դրված բոլոր խնդիրները: Համոզված եմ, որ մարդահամարի արդյունքները մեծապես կնպաստեն հանրապետության սոցիալ-տնտեսական հետագա զարգացմանը:

Երախտիքի խոսքեր եմ հղում մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների անմիջական մասնակիցներին, հանրապետության ողջ բնակչությանը՝ ակտիվ մասնակցության, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի առաջին մարդահամարի աշխատանքներին ցուցաբերած մեթոդաբանական և կազմակերպական մեծ աջակցության համար:

replace expert assessments with real figures, facilitating social and economic development planning and more effective decision-making.

The National Statistics Service of the Nagorno-Karabakh Republic, together with state and local government bodies and all interested organizations, worked hard in order to make the census a well-organized event generating high-quality results.

The 2005 Nagorno-Karabakh Republic's population census was successful in meeting its goals. I am convinced that the census results will contribute to continued social and economic development of the republic.

I would like to express my gratitude to all participants involved in preparatory work, to those who conducted the census and processed the census materials, to the whole population of the republic for its active participation, as well as the National Statistics Service of the Republic of Armenia for its great organizational and technical assistance in conducting the first-ever census in the Nagorno-Karabakh Republic in 2005.

данные, необходимые для определения перспектив социально-экономического развития страны.

Данные переписи населения позволят в дальнейшем положить в основу разработок направлений социально-экономического развития не экспертные оценки, а реальные показатели, и будут способствовать разработке политики в различных сферах и принятию эффективных решений по ее реализации.

Чтобы провести перепись организованно и на высоком уровне, потребовалась огромная работа, которую непосредственно осуществила Национальная статистическая служба Нагорно-Карабахской Республики при содействии органов государственного управления и местного самоуправления, всех заинтересованных организаций.

Перепись населения Нагорно-Карабахской Республики 2005 года была проведена на должном уровне и все поставленные задачи были выполнены. Убежден, что результаты переписи окажут большое содействие дальнейшему социально-экономическому развитию республики.

Выражаю признательность всем непосредственным участникам, осуществившим подготовку, проведение и обработку материалов переписи, всему населению республики за активное участие, а также Национальной статистической службе Республики Армения за большую организационную и методологическую помощь в проведении первой переписи Нагорно-Карабахской Республики 2005 года.